

ՄՇԵԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաւօրեայ)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

Վասիլի Դաւթեան, Աննա Ալեքսանդրեան Գորգանեանները և Մարիա Զուրաբովնա Կաւկասիէէ ցաւօք սրտի յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին՝ առաջինը հօր, երկրորդը սկստարի և երրորդը եղբոր՝ ստատսկի սովետներէ.

ԳԼԻԹԻ ԶՈՂՐԱԲԵԱՆ ԳՈՐԳԱՆԵԱՆՑԻ

մահը. Հոգեհանգիստը լինելու է երեքշաբթի, մարտի 28-ին, երեկոյեան 7 ժամին, սկստահական տան մէջ, Աւստրիական փողոց № 26: Յուղարկաւորութիւնը՝ չորեքշաբթի, մարտի 29-ին, առաւօտեան 10 ժամին գէպի Վանքի մայր եկեղեցին:

ՆԱԾԻՈՒՆ ՍՏԵՓԱՆԵԱՆ ԷԼԶԻԲԵԳԵԱՆԻ

մահվան առիթով և վշտակից են եղել ինչ իմ ծանր կորուստի ժամանակ:
Խուզի Ս. Էլզիբեգեանց
Երևան, 25 մարտի 1900:

ԲՈՎԱՆԵՆԿԱՆՈՒԹԻՒՆ

Գեղեցիկ դիտարկութիւն.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Օպերային ներկայացումներ. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հարաւ-արեւմտական պատերազմը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՅԻՆՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Երկու խօսք մեր գաւառական ինտելիգենցիային:

ԳԵՂԵՑԻԿ ԴԻՏԱՆՈՐՈՒԹԻՒՆ

„Մշակ“ երէկվայ համարում մենք ծանօթացրինք մեր ընթերցողներին այն նոր ծրագրի հետ, որ մշակվել է Թէհրանում պարսկահայերի կրթական գործերը կանոնաւորելու և բարեկարգելու նպատակով: Այդ ծրագրով Պարսկաստանի բոլոր հայ դպրոցները ենթարկվելու են մի կ ե ն ա ռ օ ն ա կ ա ն հ ի մ ն ա ռ կ ու թ ե ա ն հսկողութեան, որ պէտք է վարելի պարսից ճահի և Սալթաղամի յատուկ հովանաւորութիւնը:

Կրթական նոր կազմակերպութիւնը, չը խանգարելով և չը սահմանափակելով գոյութիւն ունեցող դպրոցների ներքին գործունէութիւնը, օրինակ, թողնելով ժողովրդի ձեռքին հոգաբարձութիւն կազմելը և դպրոցական դրամների ու կալուածքների կառավարութիւնը, իր կողմից պէտք է օգնէ դպրոցներին, մշակելով նրանց համար դասաւանդութեան ծրագրերը, հրատարակելով:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ ՄԵՐ ԳԱՒԱՍԿԱՆ ԻՆՏԵԼԻԳԵՆԿԱՆ ԳԵՂԵՑԻՍՏԻՆ

Շատ մարդկանց զգացմունքների աղնը թիւնքում են չափազանց քնքշող մի բանով, որը շատ շուտ է թաւաճում ոչ միայն փառասիրտ ազգայնականների, այլ և ողորակի մեղի բացակայութիւնից: Շատ երկրամասերի զգացմունքների աղնը թիւնքում են չափազանց շուտ է անհետաւորում, երբ որ այն պարագայները որոնցով նրանք ստիպված են դառնալ և այն միջավայրը, որի մէջ գտնվում են նրանք, չեն նպաստում այդ զգացմունքների արտայայտմանը: Գեղեցիկ ծրագրում ենք անհետաւորում են նույնպէս, ինչպէս և մտաւոր ընդունակութիւնները, երբ որ մարդիկ հնարաւորութիւն չունեն գործադրել նրանց:

Չ. Ս. Միլ.

Միւր զգացմունքների աղնը թիւնքում են չափազանց քնքշող մի բանով, որը շատ շուտ է թաւաճում ոչ միայն փառասիրտ ազգայնականների, այլ և ողորակի մեղի բացակայութիւնից: Շատ երկրամասերի զգացմունքների աղնը թիւնքում են չափազանց շուտ է անհետաւորում, երբ որ այն պարագայները որոնցով նրանք ստիպված են դառնալ և այն միջավայրը, որի մէջ գտնվում են նրանք, չեն նպաստում այդ զգացմունքների արտայայտմանը: Գեղեցիկ ծրագրում ենք անհետաւորում են նույնպէս, ինչպէս և մտաւոր ընդունակութիւնները, երբ որ մարդիկ հնարաւորութիւն չունեն գործադրել նրանց:

նոր աշխատանք և մշակութիւն: Ահաւորանական մասնաժողովը, որ ամբողջ գործի մշտական և կայուն ղեկավարողն է, որ կրթական ֆունկի զլխաւոր հսկողը և գործադիրն է, պէտք է կարողանայ հաստատ կազմութիւն ունենալ և կանոնաւոր կերպով զբաղվել իրան յանձնած գործով, կրելով պատասխանատուութիւն ընտրող մարմնի առաջ:

Պարսից կառավարութեան լուսաւոր վերաբերմունքը դէպի կրթական գործը զիւրացնում է կազմակերպութեան պաշտօնական մասը: Մտում է, որ պարսկահայ ազգայնականութիւնն էլ կարողանայ ապացուցել, որ նա էլ պատրաստ է իր փտահոլութեան յանձնած գործը աջող կերպով կազմակերպել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Արհեստաւորների համաժողովը, որի մասին խօսեցինք անցեալներում, վերջապա Մենք ասել էինք թէ որքան մեծ նշանակութիւն կարող է ունենալ մի այդպիսի ժողով մանաւանդ մեզ համար. արհեստաւոր դասակարգը մի խողոր բազմութիւն է կազմում մեր մէջ և, որ ամենից ցաւալին է, յետ մնացած մի բազմութիւն, որին ամեն կողմից զրկանքներ են հասցնում. գործարանական արդեւանքները կրթութիւնը, կատարելագործութիւնները խլում են արհեստաւորի աշխատած հացը, ձեռագործը հետզհետէ կորցնում է իր նշանակութիւնը և մի ամբողջ դասակարգ, որ բացի իր սովորած արհեստից, չունի ապրուստի մի այլ միջոց, դատապարտվում է անապահով, կէս-կուշտ, կէս-բաղնիքով կեանքի: Պէտք է, որ նախ, որ այդ դասակարգը հրապարակ հանէ իր ցաւերն ու կարիքները, պէտք է որ միջոցներ գտնէ իր գործը աւելի արդիւնաւոր, աւելի ապահովացնող դարձնելու համար: Չէ կարելի ասել թէ Պետերբուրգի համաժողովը միանգամայն ապարդիւն անցաւ: Արհեստից չէ շատ հարցեր, բարեկարգութեան ծրագրեր կազմվեցան: Բայց ժողովը ունէր և մի շատ ցաւալի կերպարանք. նա ցոյց տուց թէ արհեստաւորները որքան անկուտորական դասակարգ են, որքան մութ հասկացողութիւններ և խաւար նախապաշարունակներ ունեն: Այդ հանգամանքի վրա մատնացցու է անում «Русскія Вѣд.» լրագրի:

Ամեն մի առաջարկութիւն, որի նպատակն էր տարածել արհեստաւորների մէջ կրթութիւն և մարդասիրութիւն և որ ձգտում էր

նախում, որ և չը պէտք է ձգտել առաջադիմելու:

Շատ կան այն տեսակ մարդիկ թէ մեր և թէ բոլոր ազգերի մէջ—որոնք իւրաքանչեւ են բարոյականութեան բոլոր օրէնքները, որոնք դիտեն, թէ ինչ է լաւ և որն է վատը և շատ անգամ ոգեւորված արտայայտում են դեղեցիկ, համակրելի մտքեր, բայց իրանք նոյնը չեն իրագործում կեանքի մէջ: Այդպիսիներին առաւանարակ անուանում են ֆրագիոր և առաւան են, որ նրանք երբեք անկեղծ չեն եղել, անկեղծ չեն դաւանել իրանց դադարաւորները: Անկախած, դա ճշմարիտ է մասամբ, բայց ամեն կեղծ ոգեւորութեան արդիւնք չեն եղած: Միթէ այն ամենը, ինչ որ արտայայտվել է, բայց չէ իրագործվել, եղել է միայն կեղծիքի արդիւնք: Ոչ, կան մարդիկ, որոնք, ընդհանրապէս վերացած, ազնիւ չեն, բայց որոնք մէջ արմատ է դրած ազնիւ գզացմունքների ծիւղ: Այդ տեսակ մարդիկ ընդունակ են յափշտակվել ու ոգեւորվել ազնիւ մտքերով և այդ ոգեւորութեան բույնին նրանք նոյն իսկ ընդունակ են և մեծ գոհաբերութիւններ ապրելու: Բայց... զգացմունքների այդ ծիւղ, ինչպէս Միլին է արտաւորում, ներկայացնում է մի այն

էր կանոնաւորել գործաւորների և նրանց արհեստանոցներում բանուղների յարաբերութիւնները, ամենայնամառ դիմագրութիւն էր գտնում և կէթ ընդունվում էր՝ մեծ դժուարութիւններով էր այդ լինում և առաջարկութիւնը կրճատումների էր ենթարկվում: Այսպիսի մի տարրական կարծիք թէ օգտակար է, որ արհեստով պարագոյները սկզբնական կրթութիւն ստանան, վիճելի էր թուում համաժողովի շատ անդամներին: Նրանք աւելորդ էին համարում մինչև իսկ այն համաժողովը, որ աշակերտութեան ընդունվին միայն գտնէ միգրանտ դպրոց վերջապա երկխոսները: Մի քանիսները, որոնք աւելի հակված էին զիջումներ անելու, համաձայն էին, որ աշակերտները գտնէ հասարակ գրագիտութիւն իմանալ. միւսները այդ էլ աւելորդ էին համարում: Մի և նոյն ժամանակ, ի հարկէ, արտասանվեցին և խոճալի խօսքեր. կրթութեան հակառակորդները հուսաւորում էին թէ յաճախ իրանք երկխոսներին աշակերտ են ընդունում լոկ կարեկցութեան զգացմունքից դրված և կէթ արդիւն, որ այլ և ու անգրագիտ երկխոսներ ընդունվին, այդ դէպքում արհեստաւորները չեն կարող այդ օգնութիւնը հասցնել աղքատ ժողովրդին, որը այժմ են հասցնում: Սպիտակ թելերով կապկապած այդ առարկութիւնները, ի հարկէ, արժանի պատասխաններ ստացան համաժողովի աւելի կրթված անդամների կողմից և վճեցին. որ երկխոսները դպրոցից դուրս գալուց յետոյ աշակերտ ընդունվին:

Բայց փաստը փաստ է. ծոց է տալիս այդ փաստը, որ արհեստաւորները չեն հասկանում կրթութեան օգուտները:

Եթէ մեր արհեստաւորները—չարունակում է Մօսկվայի լրագրի—ծանօթ լինէին իրանց արտասանմանն եղբայրակիցների կեցութեան հետ, նրանք կիմանային, որ ինտելիգենտութիւնը յաղթութեան տուրքին պայման է այն մրցութեան մէջ, որին այժմ ենթարկված է արհեստաւորը: Եթէ արդիւնաւորութեան մի քանի ձեւերով, որոնց արդէն նուաճել է գործարանը, արհեստը կարողանում է պահպանել իր դիրքը, այդ միայն լինում է այն պատճառով, որ արհեստաւորը զարգացած մարդ է, կարողանում է ինկալի կերպով վերաբերվել այն պայմաններին, որոնք մէջ ինքը պիտի աշխատէ: Փոխանակ անցյալ մրցութիւն սկսելու գործարանի դէմ և փոխանակ աշխատելու, որ իր ապրանքի յատկութիւնը պակասեցնելով և իր աշխատած դրամի քանակութիւնը փոքրացնելով աշխուրթիւն ձեռք բերելի այդ մրցութեան մէջ, ինտելիգենտ արհեստաւորները չափում կշռում են թէ կարող են ձեռագործ ապրանքները տարածվել և ինչ պայմաններ են հարկաւոր դրա համար:

Հէնց այդ պատճառով է, որ արտասանմանում արհեստաւորը կարողանում է չարունակել իր արհեստը, չը նայած գործարանի մրցութեան: Ուրեմն արհեստը, իր գոյութիւնը

քան զնոյն բան, որը ոչ միայն վնասակար ազդեցութիւններից է թաւաճում, այլ և ուղղակի սննդի բացակայութեան շնորհիւ: Չը պէտք է մոռանալ, որ այդ մոռանող աշակերտ նշանակութիւն ունի, իսկ անուղղ ժառանգաւորութիւն է արդեօք, որքան հարկաւոր է: Ուրեմն ասել, թէ բոլոր այն մարդիկ, որոնք խօսել են, բայց չեն գործել, ասել, թէ այդ մարդիկ կեղծ են—սխալ է: Այն վարկածներ, երբ նրանք խօսել են, նրանք անկեղծ են եղել (խօսքս պրօֆեսիօնալ ֆրագիօրների մասին է):

Հայի բնաւորութիւնը մի բուծ բան չէ ներկայացնում, և երբ նրա վրա ընկնում է մի լաւ սերմ, այդ սերմը չէ գործում: Նրա վրայից, նա կարողանում է նրան պահել իր վրայ: Սակայն սերմը միայն մնում է նրա վրա և խոր արմատ չէ գցում: Նրա մէջ: Դրա համար պատրաստ հող չէ ներկայացնում: Հայի բնաւորութիւնը, Հայը կարողանում է շատ հեշտ ըմբռնել ամեն մի բարոյական գաղափար, բայց միայն ըմբռնել. իսկ նրան իր մէջ արիւն ու մարմին դարձնել չէ կարողանում, որովհետեւ նրա ի բնէ կաւան բնաւորութիւնը դրա համար անպատրաստ է դնում:

Բայց, ի հարկէ, կէթ ի բնէ ետական մի մարդու մէջ բարի սերմը խոր արմատ չէ գցում, կէթ բարոյական մի գաղափար նրա մէջ

պահպանելու համար, պահանջում է, որ արհեստավորները լինել կրթված, ուսումնառող և այլ յատկությունները միայն գործարարների հետ մրցելու համար չեն պահանջվում: Հարկաւոր է համարվում կազմակերպել արհեստավորներին ընկերակցութիւններ, ձեռագործների ցուցանալիքներ, ընկերական վարկի գրամարկներ: Այս բոլորը չափաւ է, ոչ ոք չի ուրախայր ձեռնարկութիւնների մեծ օգուտը: Բայց ցարէն հենց այն է, որ այդպիսի գործեր կարող են հիմնել եւ զարգացնել միայն կրթված մարդիկ, մինչդեռ արհեստավորները համաժողովում դեմ էին կրթութեան, պահանջում էին, որ չը վերացվի աշակերտներին ծեծելու իրաւունքը, չը համաձայնվեցին, որ անչափաւ աշակերտները օրական 8 ժամ աշխատեն, ինչպէս այդ սահմանված է օրէնքով գործարարներում աշխատող երեխաների համար: Այդ ցուցակը գործերը զարմանալի չեն: Զարմանալ չէ կարելի, երբ ազատ, անզարգացած արհեստավորը հրապարակով ժողովում է լուսավորութեան օգուտը, երբ նա այնքան սահմանափակ հասկացողութիւնների տէր է, որ նոյն իսկ չէ իմանում, թէ ինչ են պահանջում իր սեփական շահերը: Պէտք է, որ երեւնի, որ հասարակութիւնը եւ օրէնսդրութիւնը օգնութեան հասնեն, պէտք է որ չօլափելի գառնան շատ օրինակներ, որոնք կարող կը լինեն իրապէս ցոյց տալ զարգացած եւ անզարգացած արհեստավորների տարբերութիւնը: Եթէ այսպէս է Ռուսաստանում, ուր համեմատաբար զարգացել չափաւ ժողովրդի համար, հապաինչ պիտի լինի մեզ մօտ: Մեր արհեստավորը զատկաբար դեռ չէ էլ զուրա եկել աշխատանքի չընալից, մեզանում արհեստների մեծ մասը դեռ չէ էլ ստացել ժամանակակից կեանքի պատկերը. մենք այլ եւս հին ձեւեր կօշկիներ, փափախներ չենք հագնում, մեր աների շինութեան, մեր կահկարասիքի վերաբերմամբ ունենք այնպիսի պահանջներ, որոնց բաւարարութիւն չէ կարող տալ մեր յետամնաց, հնութեամբ պաշարված արհեստավորը: Կրթութիւնը նրան ամենից շատ հարկաւոր կը լինէր արհեստը վերանորոգելու, կատարելագործելու համար, էլ չենք խօսում հարկերու մի պակասութիւնների մասին, որոնք տղիւտութեան արդիւնք են: Հիմնել արհեստավորական դպրոցներ, կրթութեան լայն մտնել իր ձեռքի աշխատանքով մի կտոր ազնիւ հաց աշխատող դասակարգի մէջ—անա ամենամեծ կարիքը: Պետերբուրգի համաժողովը մի քանի շատ համակրելի վճիռներ է կայացրել. տեսնենք մեր երկրի արհեստավորական կեանքը ինչպէս կը վերաբերվի այդ առաջին փորձերին:

ՕՊԵՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ

Չվիսերի եւ Եակովլեւի գօտորօններից յետոյ սկսվելին ամսին 17-ին Շախալինի եւ ապա Միկուլայի գօտորօնները: Չվիսերի մասին մենք այս տարի միայն իմացանք, որ նա հռչակաւոր կօրստուր—սօսըրանօ է, մինչդեռ նա այնքան էլ ջանք չէ: Հասարակութիւնը բոլոր գօտորօններին էլ

միանգամայն բարոյական կերպարանափոխութիւն չէ առաջ բերում, այնու ամենայնիւ այդ զարգացած ունեւում է որոշ բարեբար աղքատութիւն նրա բարոյականութեան վրա: Նա կարողանում է գտնէ մի քիչ ժամանակ, գտնէ մի քանի վայրկեան, գտնվել գեղեցիկ մաքր ազդեցութեան տակ եւ ուրեմն լինել, թէկուզ միայն մի քանի վայրկեան, բարոյապէս բարձր: Իսկ ով կարող է լինել թէկուզ մի քանի վայրկեան բարոյական մարդ, նա ընդունակ է բարոյական լինելու եւ ժամեր, օրեր ու տարիներ: Իսկ նրա որդին կարող է աւելի բարոյական լինել աւելի երկար ժամանակ, իսկ նրա թոռը կարող է եւ ամբողջ կեանքումը լինել բարոյական մարդ: Այսպէս, ուրեմն, բարոյականութիւնն էլ մի բոյս է, որին մի հասարակութեան ծառ դառնալու համար անհրաժեշտ է սնունդ, անհրաժեշտ է ժամանակ: Այս ընդհանուր նկատողութիւններից յետոյ դիմենք բուն խնդրին: Երբ զաւառական ինտելիգենցիան կամայկամայ կենտրոնանում է Բագուում Գաւառը գտարկվում է եւ, եթէ այսպէս շարունակվելու լինի, շատ չի անցնի, երբ այնտեղ եւ ոչ մի ինտելիգենտ չի մնայ: Դա իրողութիւն է, ինչպէս իրողութիւն է եւ այն, որ այդ ինտելիգենցիան, գալով Բագու, ենթարկվում է այնտեղ տիրող վնասակար հոսանքին, եւ նախկին իդէալիստը դառնում է

յաճախեց. նա գրավում էր, ասելով տեխնիկա, կօրստուր, կատարում, ամենաբարձր նօտաներ, նատուրէլ—մի Պէտք է ասած, որ «Լուչիա», «Սօմնամուլա», «Սեվիլի Սափրիչ» եւ «Դինօրայից» մի կտոր աւելի նպատակաւոր էին արտիստուհի համար, քան թէ Զիլտա եւ Տրափաւա դերերը, ուր ասեն քայլում յիշում էինք մեր տեղային ազանչիկ պրիմա-գօննային թող տան ում կուզեն հռչակ անուն, միակ սիրելին, միակ արժանին միւս է մեզանում դարձաւ օր. Պապայան:

Եակովլեւ Պետերբուրգի Կայսերական թատրոնի օպերային արտիստ առաջին բարիտոնը մեծ աշխուժիւն ունեցաւ իր գօտորօններում, եւ արժանի էր դրան: Նրա ներկայացրած Եւգեն Օնեգինը տրվեց երկու շաբաթվայ ընթացքում հինգ անգամ եւ միշտ թատրոնը լիքն էր լինում: Նրա թաւալային ձայնը, մեղամաղձական հնչիւնը, գեղեցիկ արտասանութիւնը, փառաւոր արտաքինը, գեղարուեստական խաղը եւ զգայունքով լի կատարումը լիովին նպաստում են հռչակաւոր անուն կրելու: Նա իր բոլոր դերերումն էլ գրաւիչ էր, բայց ամենից հիմնալից էր Օնեգինը: Նրան շատ համապատասխան էր Տատիանան (Պապայան), որին շատ Տատիանաներ տեսնող Եակովլեւը աւելի է հաւանել իրեն լաւ զոյգ իր խալին: Վերջին ներկայացման ժամանակ (Պօզնիսիօյա) Տատիանայի հետ խաղալիս Եակովլեւը այնքան չքեղ չէր, ինչպէս առաջին անգամները:

Մօսկվայի Կայսերական թատրոնի օպերային արտիստ առաջին բասօ Շախալինի առաջին գօտորօն էր Մեֆիստֆելի դերը «Ֆաուստ» օպերայում: Ահաւասիկ մի արտաքին կարգի Մեֆիստֆելի, որի նմանը մինչեւ օրս չէ տեսնված, այնպէս տարօրինակ, ինչպէս Ադամանի Համլէտը: Շախալինի իրեն դերակատար, հանձար է: Նա Մեֆիստֆելից այնպիսի մի գործը ոգի է տոնգծել, որ ամեն ինչ իրան է ենթարկում: Բեմ, օրիւտար, խուճը, դերակատարներ, դահլիճ այս բոլորը կարծես նրան հպատակվելու համար են, նա բարձրացրել լիովին տիրապետում է բոլորին, ամենքը իր կողմնակա են, նրա իւրաքանչիւր շարժումը սարսեցնում է տեսողին: Ամբողջ ներկայացմանը անընդհատ երկու դեր է կատարում, մինք խաղելով գրաւել իր գոհերին, միւսը հեղաշարժաւոր նրանց, եւ այդ ցնցում է երգում, ձայնի փոփոխութեամբ, խաղով եւ առանձին միմիկայով այնքան ազգու, որ միշտ երկիւղով են հետեւում նրա ամեն մի շարժմանը:

Երբորդ գօտորօնի մէջ Մարգարիտայի ետեւ, գլխի վրա «Ջիք քեզ փրկութիւն» աստիկ ազդեցութեամբ երգելուց յետոյ իր խոշոր մարմնով մայրիկի մի պտուղ կատարեց, որ ոչ ոք չը հասկացաւ թէ դա ինչ է, մի մեծ փոթորիկ յարուցեց բեմի վրա եւ մի ակնթարթում գետին անցաւ: Ամենքը սարսափեցան: Յետոյ երեւաց, որ Մարգարիտան չընչապառ ընկած է: Երկրորդ գօտորօն էր Ջաղապան Բուսալայի մաս: Նոյնպէս հիմնալի: Միկուլայի հասարակ Արդա էր:

Կարա-Մուրզա

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մարտի 18-ին

Թող տուէք, խնդրում եմ, «Մշակ» միջոցով ներկայացնել հասարակութեան հետեւեալ փոքրիկ հաշիւը:

Մեծ պատի ընթացքում իմ կարգացած հինգ հրապարակական դասախօսութիւններից ստացվել է մուտք ընդամենը 604 րուբլի: Միայն երկու է 173 րուբլի (Կրուժօկի դահլիճի վարձ 85 ր., ծառաներին 21 ր., մոզական լապտերներին, տպարանական ծախսերի եւ այլն 67 րուբլի): Մնացորդը—431 րուբլի հաւասար չափով յանձնված է երկու կիրականօրեայ դպրոցներին եւ երկնային ինստիտուտ ընկերութեան վարչութեան: Պարտք եւս համարում չորհրդակցութիւն յայտնել: Կրուժօկի աւագների խորհրդին, որ գիւնց դահլիճը, ստանալով միայն անհրաժեշտ ծախսերը, «Касса», «Тифлисский Листок» եւ «Մշակ» լրագիրների խմբագրութիւններին յայտարարութիւնները ձրի տպագրելու համար եւ այ. այ. Ս. Գ. Մեխանիկովին եւ Լ. Բ. Սիդորովին տոմսակների վաճառման նկուղիներ յանձն առնելու համար:

Վ. Լուսնիկիչ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կարա, մարտի 8-ին

Վերջերս Կարաից «Մշակին» գրված մի թղթ-թակցութեան մէջ, հաղորդվելով իմ գանձապահութեան օրով ժամանակին չը ներկայացրած գումարի մասին, առանձնակի շնչով եւ կատարված քննութեան վրա, պակասորդ գումարը բաժանվում է տարիների եւ այլն եւ այլն: Ցանկութիւն չունենալով ինձ արդարացնելու, աւելորդ չեմ համարում երկտողմի դիմել խմբագրութեանը լոկ ճշմարտութիւնը երեւան հանելու նպատակով:

Ես պարտ եմ Մարգ-Աթոնի մօտ երեք հազար րուբլի, իսկ աւանդներին էլ (պահեստի դրամներ) մօտ 800 րուբլի: Ոչ մի կօպէկ փող չեմ ստացել հոգեւոր կառավարութեան առանձնաւոր առանց կանխապէս ստորագրելու իւրաքանչիւր կօպէկի ստացման մասին յայտարարութեան, կտրուաւոր ժապաւինեալ մատանի կտրուի եւ արժանի տակ, ինչպէս նաեւ օրագիրների վրա: Հետեւեալ, քննելու ոչինչ չը կար եւ արդէն պարզ լինելով ինձ մօտ եւ զած գումարի քանակութիւնը, ինձ, փոխանորդ ինչի վարդապետի վերադառնալուց յետոյ, տրված էր միմիայն երկու ամիս ժամանակամիջոց պաշտօնական առաջադրութեամբ լրացնելու ամբողջ գումարը, որպիսի միջոց խնդրել էի ինքս լուսաւոր ստանալ գումարը պարտականութիւնից: Այդ ժամանակամիջոցում մաքրվելին օտարային բոլոր հայրերը 1898 եւ 99 թուականներին Ստալին գեռ երկու ամիսը չը լրացած ժամանց Մատթէոս վարդապետ եւ կարգաց մատանները, որոնք պարզ հայելի էին պարտքիս եւ քննութեան ոչ մի կարօտութիւն չունէին:

Այժմ դաժ իմ գործած յանցանքին: Նա կայանում է նրանում, որ ես առանց թղթաւորութեան համարձակվելիք ուղղորդեալ ժամանակով էլ միաձայնապատկան մի պատկառելի գումար տալ մասնաւոր անձի իր վերցրած կապիլի համար որպէս գրաւական ներկայացնելու: Այդ գումարը տեղական գրաւական վարչութեան մօտ մինչեւ այսօր մնում է իր նախկին նպատակով անձեւանվելի, իսկ ինձ չէ վերադարձվում ստանալ, որ ժամանակին իշխանութեանս դրամները լիովին հատուցանեմ: Այսպէս ահա մի երկու դէպք, եւ ես վստահող, ուսող եմ եւ այլն: Զր հերքելով յանցանքութեան ներկայ դէպք:

հակապական բարոյական ոյժ, որը կարողանայ դիմանալ ամեն մի ապականված միջոցաւոր: Այդ տեսակ բարոյական առողջ օրգանիզմները հասարակութիւն են կազմում մասնաւոր ներկայութեան, մի ժամանակ, որ յայտնի է կամքի եւ բարոյական ոյժի բացակայութեամբ:

Միլի վերեւ բերած խօսքերը կարծես հենց Բագուում կենտրոնացած մեր ինտելիգենցիայի մասին են ասված: Իսկապէս դեմ զգացմունքներին աղնաւորութիւնը առաւել չեմ տոյժ քան է ներկայացնում, քան հայ ինտելիգենտները: Եւ որտեղ է մարդու բարոյականութիւնը ենթարկված աւելի վնասաւար ազդեցութեան, որտեղ է սննդի բացակայութիւնը այնքան զգալի, որքան Բագուում: Որտեղ են այնքան անպատու թէ զգալի մեղքերը, թէ միջապայը ազնիւ զգացմունքների արտայայտման համար: Եւ վերջապէս որտեղ աւելի քիչ հնարաւորութիւն կայ գործադրել գեղեցիկ ձգտումները քան Բագուի մէջ:

Ահա մեր այս բոլոր ազանքները հիման վրա մենք առաջարկում ենք մեր գաւառական ինտելիգենտին չը դադարի Բագու, մնալ գաւառում: Թող նա չը վստահանայ իր բարոյական ոյժի վրա, կարծելով, թէ փորձութեան միջոց յաղթող դուրս կը գայ: Նա դեռ եւս չունի այդքան բարոյական ոյժ, նրա զգացմունքների աղնաւորութիւնը դեռ եւս մի չափազանց քնքոյ լայն է, որը անկարող է դիմանալ եւ պէտք

քում, սրանով այդ ինձ համար շատ աւելի փոխալ լուրերին վերջ տալու համար կարեւոր եմ համարում հրապարակով յայտնել, որ պարտքս առաջ է եկել վերոյիշեալ ձեւով եւ եւ իշխանութիւնիցս խնդրել եմ ժամանակ (1000 րուբլին հատուցանելու մինչեւ ապրիլի վերջը, իսկ մնացածը 1 կամ 1½ տարվայ ընթացքում): Իսկ եթէ Աստուած արթնացրեց այն մարդկանց խիղճը, որոնք այսպէս են հատուցանում արածիս փոխարէն, այն դէպքում մինչեւ սեպտեմբեր հարաւորութիւն կունենամ վճարելու ամբողջ գումարը հանդերձ տոկոսով եւ երբեք վնաս չեմ հասցնի իշխանութեանս, որպիսի միտումն, բոլոր իշխանաւորներիցս վերկայեալ անձնուէր պաշտօնավարութեանս միջոցին երկար տարիների ընթացքում, երբեք չեմ ունեցել, չը նախկին 70—80 հազար րուբլուց աւելի է ստացվել եւ ուղարկվել ձեռքովս:

Յակովլը աւագ քահանայ Կիրակոսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի նահանգի բոլոր գաւառապետները այժմ գտնվում են Թիֆլիսում, որտեղ նրանք, նահանգապետ պ. Սվեչինի նախագահութեամբ, խորհրդածութիւններ են կազմում նահանգի զանազան կարիքների վերաբերմամբ: Այդ ժողովներում, ի միջի այլոց, ենթադրվում է կապ եւ միութեան հաստատել գաւառապետների գործողութիւնների մէջ նահանգի ազգայնակութիւնը գոյութիւնից, աւագակութիւնից, վրէժ առնելու համար կատարվող մարդասպանութիւններից եւ յանցաւորներին թագնելու: Վնասակար սովորութիւնից պաշտպանելու համար Գաւառապետների առաջին նիստը տեղի ունեցաւ մարտի 23-ին, պ. նահանգապետի ընկալարանում:

Երկրագործութեան եւ պետական կալուածների միջնատրի կովկասեան լիազօր պ. Է. Ս. Սիդովիցիի կարգադրութեամբ կազմված է մի յանձնաժողով: Թիֆլիսի շերտապահական կապարանի այժմեան դրուժները: Ցանձնաժողովի նախագահն է լիազօրի օգնական պ. Ֆ. Մ. Շիմանօվսկի, իսկ անդամները պ. պ. Վասիլեւ եւ Նեւակի:

Այսօր, մարտի 29-ին, լրանում է յիսուն տարի այն օրից, երբ տեղի ունեցաւ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան առաջին նիստը, այն ժամանակվայ փոխարքայ իշխան Մ. Վ. օր օր օվի նախագահութեամբ, որը եւ զլրխաւոր հիմնադիրն էր եւ նախաձեռնողը այդ ընկերութեան:

Թիֆլիսի քաղաքային դուժայի վերջին նիստում, որ տեղի ունեցաւ երկուշաբթի, մարտի 27-ին, քաղաքապետ լիազօր Դաւիթ Դ. օր օր անի մահվան մասին, զեկուցեց, որ հանգուցեալը երեք ընտրողական շրջանում ձայնատու է եղել, մի քանի անգամ եղել է քաղաքային դուժայի կողմից ներկայացուցիչ այգեգործական ցուցահանդէսներում եւ երեք տարի վարել է որբերի դատարանի նախագահի պաշտօնը: Դուժայի յարգեց հանգուցեալի յիշատակը ուղի կանգնելով կարող եմք մեր կողմից աւելացնել, որ Դաւիթ Դ. օր օր անի մի քանի տարի վարում էր

է անպատճառ թաւառէ Բագուի նման մի տեղում, որը ոչ միայն հարկաւոր անունը չունի մատակարարելու նրան, այլ եւ դերը չէ չափազանց վնասակար ազդեցութիւններից:

Այնտեղ, ուր տիրում են այլանդակ, հրէշաւոր բարքեր, այլանդակ հասարակական կարծիք, ուր այդ հասարակական կարծիքը ոչ միայն չէ դատապարտում, այլ նոյն իսկ արդաբացնում է այնպիսի խայտառակ կարմունքներ, ինչպիսիքներն են Իրկաւի եւ հազարաւոր նմանների անաճաճակ աւագակութիւնները: Այնտեղ երբեք ազնիւ զգացմունքների ծիլ աճել չէ կարող: Կրկնում ենք, այնտեղ սրճ ունի չը կայ, այնտեղ կայ միայն սպանել եւ թունաւորող մի միջոցաւոր: Թող ուրեմն մեր գաւառական ինտելիգենտը մնայ գաւառում: Նա կունենայ այնքան բարոյական ոյժ, որ կը տանէ գաւառի անապատով եւ զրկանքներով լի կեանքը, բայց եւ կը մնայ իր կոչման բարձրութեան վրա: Մեր խօսքը ի հարկէ, այն ինտելիգենտների մասին է, որոնք գերադասում են զարգացողական կեանքը ապահովել բուրժուական հանգիստ նիստ ու կացիք: Մենք դիմում ենք նրանց, որոնք դեռ չեն դաւաճանել զարգացողական:

Ա. Ամիրան

Կի ե վ.

